ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2017թ. թիվ 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ և 96-րդ հոդված 1-ին կետերը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N 5-Ա հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել 2017 թվականին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության հարցաշարերով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա.Սահակյանին՝ յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2017թ. հունվարի 20
ք.Վանաձոր